600.0125.08.04.20

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# ՈՐՈՇՈՒՄ

8 ապրիլի 2020 թվականի №125Ա
ք.Երևան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 12-Ի №133Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ «ԳԵՏԻԿՀԷԿ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ ԳՈՒՄԱՐ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) 2020 թվականի մարտի 18-ի №20/03 գրությամբ «ԳԵՏԻԿՀԷԿ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) դիմել է Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով)՝ խնդրելով մեկ տարով երկարաձգել Հանձնաժողովի 2017 թվականի ապրիլի 12-ի №133Ա որոշմամբ Ընկերությանը տրամադրված «Գետիկավանք» փոքր հիդրոէլեկտրակայանում (այսուհետ՝ Կայան) էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության ԼԷ№0602 լիցենզիայով (այսուհետ՝ ԼԷ№0602 լիցենզիա) ամրագրված կառուցման ժամանակահատվածը: Միաժամանակ Ընկերությունը տեղեկացրել է, որ 2020 թվականի մարտի 18-ին նախատեսվել է ավստրիացի մասնագետների այցը Կայանի վերջնական միացման աշխատանքներն իրականացնելու նպատակով, սակայն հաշվի առնելով վերջին զարգացումները՝ այցը հետաձգվել է անորոշ ժամանակով,

բ) 2020 թվականի մարտի 24-ի №20/04 գրությամբ Ընկերությունը հանձնաժողով է ներկայացրել իր և ավստրիական «Global Hydro Energy GmbH» ընկերության միջև 2018 թվականի մայիսի 22-ին կնքված սարքավորումների ձեռքբերման և ծառայությունների մատուցման մասին պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) և վերջինիս կողմից Ընկերությանն ուղղված 2020 թվականի մարտի 19-ի գրությունը՝ խնդրելով, դրանք և Հայաստանի Հանրապետությունում ստեղծված արտակարգ դրությունը հաշվի առնելով,

ընդառաջել և Լիցենզիայով ամրագրված կառուցման ժամանակահատվածը երկարաձգելիս չկիրառել լրացուցիչ տույժեր,

գ) 2020 թվականի մարտի 31-ի №20/05 և ապրիլի 2-ի №20/06 գրություններով Ընկերությունը ներկայացրել է իր և «Կոնվերս Բանկ» փակ բաժնետիրական ընկերության միջև կնքված ակրեդիտիվի պայմանագիրը և ՍՎԻՖՏ (SWIFT) հաղորդագրություն՝ հայտնելով, որ ձեռք բերված սարքավորումները Հայաստանի Հանրապետություն են ներմուծվել մինչև 2019 թվականի մարտի 31-ը: Նշված ժամկետում սարքավորումների ներմուծումը պայմանավորված է եղել այն հանգամանքով, որ ապրանքների ներմուծման համար տրված երաշխիքային ժամկետը լրանում էր (պայմանագրում վերաերաշխավորող է հանդիսանում Վերակառուցման և զարգացման Եվրոպական բանկը (EBRD), և նշված գործիքակազմը կիրառվում է մեկ տարի ժամկետով), ուստիև ներմուծումը պարտադրված է եղել: Սակայն ապրանքների մատակարարումը և մոնտաժումը տվյալ ժամանակահատվածում, հաշվի առնելով եղանակային պայմանները, անիրատեսական է եղել: Իսկ պայմանագրում սահմանված ժամկետները կրում են մոտավոր բնույթ՝ հաշվի առնելով աշխատանքների իրականացման կողմերից յուրաքանչյուրի պատրաստվածության աստիճանը: Կան նաև բազմաթիվ այլ հանգամանքներ, որոնք ունեցել են իրենց ազդեցությունը Կայանի վերջնական շահագործման հանձնելու տեսանկյունից, որոնցից կարելի է առանձնացնել մատակարար ընկերության պահանջները մոնտաժման աշխատանքների առնչությամբ, որոնք Ընկերությունը պատրաստակամ է ներկայացնել Հանձնաժողովում հարցի քննարկման ժամանակ,

դ) Հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգի №3 հավելվածի՝ երաշխիքների ներկայացման և պետական բյուջե փոխանցման կարգի (այսուհետ՝ Կարգ)՝

- 7-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ Հանձնաժողովը որոշում է ընդունում երաշխիքով սահմանված գումարի կեսը Հայաստանի Հանրապետության պետական բյուջե փոխանցելու մասին, եթե Հանձնաժողովը որոշում է ընդունել արտադրության լիցենզիայով սահմանված կառուցման (վերակառուցման) ժամանակահատվածը երկարաձգելու մասին,
- 10-րդ կետի համաձայն՝ լիցենզավորված անձի ներկայացրած երաշխիքով սահմանված գումարը Կարգով սահմանված դեպքերում Հայաստանի Հանրապետության պետական բյուջե չի փոխանցվում, եթե նրա կողմից լիցենզիայի պայմանների չկատարումը կամ ոչ պատշաճ կատարումը հետևանք է ֆորս մաժորի: Կարգի իմաստով ֆորս մաժոր է

համարվում ցանկացած հանգամանք կամ դեպք (դրա հետևանք), որը հանգեցրել է (հանգեցնում կամ կարող է հանգեցնել) լիցենզավորված անձի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման և միաժամանակ բավարարում է հետևյալ պայմաններին՝

1) չի գտնվում լիցենզավորված անձի վերահսկողության ներքո.

2) լիցենզավորված անձը ձեռնարկել է բոլոր անհրաժեշտ միջոցները և ջանքերը (այդ թվում՝ նախազգուշական, այլընտրանքային, օրենսդրությամբ նախատեսված) նշված հանգամանքները (հետևանքները) կանխելու, վերացնելու, մեղմելու կամ դրանցից խուսափելու համար.

3) լիցենզավորված անձը տեղեկացրել է Հանձնաժողովին իրազեկվելուց հետո հնարավորինս սեղմ ժամկետում, բայց ոչ ուշ, քան այդ մասին իրազեկվելուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում,

ե) Հանձնաժողովի 2020 թվականի ապրիլի 8-ի նիստում հարցի քննարկման ընթացքում Ընկերությունը խնդրել է ԼԷ№0602 լիցենզիայով ամրագրված կառուցման ժամանակահատվածը հայտով հայցված մեկ տարվա փոխարեն երկարաձգել երկու տարով, քանի որ հնարավոր չէ կանխատեսել, թե ստեղծված արտակարգ իրավիճակում, երբ հնարավոր կլինի ապահովել համապատասխան մասնագետի այցը Հայաստանի Հանրապետություն և ամբողջությամբ ավարտին հասցնել կայանի կառուցման աշխատանքները,

զ) Հանձնաժողովը, ուսումնասիրելով առկա փաստական հանգամանքները և լսելով Ընկերության ներկայացուցչին, գտնում է, որ Լիցենզիայով ամրագրված կառուցման ժամանակահատվածը երկարաձգելու վերաբերյալ Ընկերության հայտը ենթակա է բավարարման, իսկ երաշխիքով սահմանված գումարի կեսը Հայաստանի Հանրապետության պետական բյուջե չփոխանցելու հիմքերը բացակայում են: Մասնավորապես, Կարգի համաձայն՝ երաշխիքով սահմանված գումարը սահմանված դեպքերում Հայաստանի Հանրապետության պետական բյուջե չի փոխանցվում, եթե նրա կողմից լիցենզիայի պայմանների չկատարումը կամ ոչ պատշաճ կատարումը հետևանք է ֆորս մաժորի: Տվյալ դեպքում Ընկերության կողմից չի հիմնավորվել Կայանի կառուցման՝ իր պարտավորության չկատարումը ֆորս մաժորի հետևանք լինելու հանգամանքը: Մասնավորապես, որպեսզի հանգամանքը համարվի ֆորսմաժորային, անհրաժեշտ է, որ այն հանգեցրած լինի կոնկրետ պարտավորության չկատարման, և լիցենզավորված անձը ձեռնարկած լինի բոլոր անհրաժեշտ միջոցներն ու ջանքերը

(այդ թվում՝ նախազգուշական, այլընտրանքային, օրենսդրությամբ նախատեսված) նշված հանգամանքները (հետևանքները) կանխելու, վերացնելու, մեղմելու կամ դրանցից խուսափելու համար, մինչդեռ Ընկերության ներկայացրած փաստաթղթերով նշված հանգամանքների առկայությունը չի հիմնավորվել, այն պարագայում, երբ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի համաձայն՝ անձի և վարչական մարմնի փոխհարաբերություններում ապացուցման պարտականությունը կրում է անձը՝ նրա համար բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում: Մասնավորապես, առկա փաստական հանգամանքների ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ՝

- Կայանի շահագործման համար անհրաժեշտ սարքավորումները դեռևս 2019 թվականի մարտ ամսին առաքված են եղել Հայաստանի Հանրապետություն: Պայմանագրի 5-րդ հոդվածի համաձայն՝ դրանց տեղադրումը պետք է ապահովվեր առաքումից 30-օրյա ժամկետում, իսկ Պայմանագրով սահմանված աշխատանքների կատարման ժամանակացույցի և 4-րդ հոդվածի ուսումնասիրությունից էլ կարելի է եզրահանգել, որ սարքավորումների գործարկումը պետք է իրականացվեր դրանց տեղադրումից երկու շաբաթում, բայց ոչ ավելի քան 90 օրվա ընթացքում: Ընկերության կողմից որևէ կերպ չի հիմնավորվել սարքավորումների գործարկումը նշված ժամկետներում իրականացնելու անհնարինության հանգամանքը: Իսկ ինչ վերաբերում է վերջինիս պնդմանը, թե «ապրանքների մատակարարումը և մոնտաժումը տվյալ ժամանակահատվածում, հաշվի առնելով եղանակային պայմանները, անիրատեսական է եղել», հարկ է նշել, որ այն ոչ հիմնավոր է, քանի որ համապատասխան սարքավորումների առաքումից անցել է շուրջ մեկ տարի և անհասկանալի է, թե մեկ տարվա ընթացքում ինչ եղանակային պայմաններ են անհրաժեշտ եղել Ընկերությանը դրանց մոնտաժման համար,
- Կարգի 45-րդ կետի համաձայն՝ կայանի կարգաբերման-գործարկման աշխատանքների ընթացքում առաքվող էլեկտրական էներգիայի հաշվառումն իրականացվում է Հանձնաժողովի սահմանած օրինակելի ձևին համապատասխան կնքված պայմանագրի հիման վրա: Այդ պայմանագիրն ուժի մեջ է մտնում Հանձնաժողովում գրանցման պահից: Սակայն մինչ օրս համապատասխան պայմանագիր, որը անհրաժեշտ էր Կայանի կարգաբերման-գործարկման աշխատանքները սկսելու համար, Հանձնաժողովի գրանցմանը չի ներկայացվել: Ընկերությունը չի հիմնավորել նաև, որ առկա է էներգատեղակայանքի գործարկման

եզրակացություն այն պարագայում, երբ Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հունիսի 1-ի №739Ն որոշմամբ հաստատված 6 կՎ և բարձր լարման նոր կառուցվող և վերակառուցվող էլեկտրատեղակայանքների գործարկման եզրակացություն տալու կարգի 11-րդ կետի համաձայն՝ էլեկտրատեղակայանքները գործարկվում են լիազոր մարմնի կողմից տրված էլեկտրատեղակայանքի գործարկման եզրակացության առկայության դեպքում: Հետևաբար, նման պայմաններում, անգամ ավստրիացի մասնագետի՝ Հայաստանի Հանրապետություն ժամանման պարագայում կարգաբերման-գործարկման աշխատանքներն անմիջապես իրականացվել չէին կարող՝ հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ Պայմանագրի 5-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր տուրբինի գործարկումը պահանջելու էր մեկից երկու շաբաթ,

- Ընկերության կողմից 2017 թվականի մարտի 24-ին Հանձնաժողով ներկայացված ԼԷ№0602 լիցենզիայի տրամադրման հայտին կից՝ Կայանի գործարար ծրագրի շինարարության օրացուցային գրաֆիկի համաձայն՝ Կայանի կարգաբերման-գործարկման աշխատանքները պետք է իրականացվեին Կայանի կառուցման վերջին տարվա վերջին եռամսյակում, մինչդեռ այդ աշխատանքների կատարմանն ուղղված որևէ աշխատանք Ընկերության կողմից, ըստ էության, չի կատարվել, և

հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 33-րդ և 34-րդ հոդվածները, Կարգը, այդ թվում՝ Կարգի №3 հավելվածի՝ երաշխիքների ներկայացման և պետական բյուջե փոխանցման կարգի 7-րդ կետի 1-ին ենթակետը՝ Հանձնաժողովը **որոշում է**.

1. Երկու տարով երկարաձգել Հանձնաժողովի 2017 թվականի ապրիլի 12-ի «ԳԵՏԻԿՀԷԿ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության «Գետիկավանք» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա տրամադրելու մասին» №133Ա որոշմամբ Ընկերությանը տրամադրված էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության ԼԷ№0602 լիցենզիայով ամրագրված Կայանի կառուցման ժամանակահատվածը՝ որոշման մեջ «մինչև 2020 թվականի ապրիլի 12-ը» բառերը փոխարինելով «մինչև 2022 թվականի ապրիլի 12-ը» բառերով:

2. Ընկերությանը՝ ԼԷ №0602 լիցենզիայի պայմանները չկատարելու պատճառով Կայանի կառուցման ժամանակահատվածը երկարաձգելու համար, սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից՝

1) մեկամսյա ժամկետում «Կոնվերս Բանկ» փակ բաժնետիրական ընկերության 2017 թվականի մարտի 24-ի №COD/0268 գրությամբ Հանձնաժողով ներկայացված բանկային երաշխիքի համաձայն երաշխավորված 6 100 000 (վեց միլիոն հարյուր հազար) դրամ գումարից 3 050 000 (երեք միլիոն հիսուն հազար) դրամը 900005028130 հաշվեհամարով փոխանցել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե.

2) քառասունհինգօրյա ժամկետում Հանձնաժողով ներկայացնել 6 100 000 (վեց միլիոն հարյուր հազար) դրամ գումարի երաշխիք՝ մինչև 2022 թվականի մայիսի 27-ը գործողության ժամկետով:

3. Ընկերությանը՝ ընդունել ի գիտություն, որ իրավասու է սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում այն բողոքարկել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2020 թվականի ապրիլի 12-ից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ք.Երևան
8 ապրիլի 2020թ.